



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30385
Մարտ 18, 1988

Արժանաշնորհ
Տ. Վրթանէս Ա. Քհնյ. Գալայճեան
Հովի Ա. Աստուածածին Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուաշինկթըն.

Սիրելի Տեր Վրթանէս,

Ստացած ենք Մարտ 2, 1988 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր
նախագահութեամբ Փետրուար 7ին գումարած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած
է Ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան
արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ
տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց
անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք
յաջող եւ արդիւնատու գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Եկեղեցոյդ եւ ի հոգևոր
շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Նշան Տիպկերեան
Լուսի Մուրատ
Էտուրրտ Օնանեան
Վարուժան Վարուժանեան
Սոքրատ Պոյսճեան